Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10352

Lucyn

Zlipnuc

Praha
1904

891.99
L-13

Ֆ.3.ԿՅ1.542
Ա15
ար.

Գ. ԱԼԻԽԱՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
1908 - 1919
ԿԱՑԱՐԱՆ Ա. ՊՈԼԻՍ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. ԱՇ. Խ.

891.99
L-13

Լ Ա Զ Օ

ՀԵՐՈՍԸ

ՄԻ ԱՐԿԱԾ ԶԷՅԹՈՒՆԻ ՎԵՐՋԻՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԻՑ

27

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԻԱՄԻՍԻՆՅԱՆ
Անվան
Публичная Библиотека

ՐՈՒՍԱՃՈՒԿ
Տպ. «Վերածնութիւն»ի
1904

ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ
«ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ»

6786

ՀԵՐՈՍԸ

ՄԻ ԱՐԿԱԾ ԶԷՅԹՈՒՆԻ ՎԵՐՋԻՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԻՑ

1908 - 1919

Վրէ՛ժ, վրէ՛ժ է որոտում
Կիլիկիայի լեռնցին,
Էլ համբերել, էլ լուծ տանել
Անկարող է զէյթունցին.
Նա իրաւունք է պահանջում
Արեան դաշտում սուրը ձեռք.
Մարտի հրաւէր է նա կարդում
Լուծը ջարդող վերջին երգ...

Ժող.

Ա.

Մռնչում էր մարտկոցը։

Նա ժանտ դևի նման բազմած լեռան կատարին, բազմագլխեան բերաններից անդադար դուրս էր ժայթքում ծխի քուլաներ, որոնք տարածւելով մթնոլորտում՝ աւելի ևս խտացնում էին աղջամղջային մթութիւնը։

2003

Ականատներից երբեմնակի դուրս վիժող հրա-յին ժայթքումը րոպէապէս մի կախարդական սարսափեցուցիչ լոյս էր սփռում շրջակայքը, որին յաջորդում էր նոյն աղջամղջային ահա-բեր մթութիւնը։

Մռնչում էր նա։

Մռնչում էին նրա ահեղ ձայնից և՛ լեռ-ներն ու ձորերը։ Վայրի գազաններն իսկ սար-սափահար թողնում էին իրենց ձագուկներին որջերում և խելակորոյս փախչում այդ հրէ-շային արհաւիրքից։ Դարաւոր հսկայական ժայռերն անգամ անմասն չէին այդ ընդհա-նուր տագնապից. Նրանք ևս ահաբեկված՝ դող-դողում էին և ահեղագոչ դղրդիւնով փշրուած ցած տապալւում։ Դողում էր բնութիւնը. սար-սափահար դողդողում էր արարած-աշխարհ. դողդողում էր և՛ ինքը, ահռելի վիշապը — մարտկոցը... Նա նմանում էր մի հսկայական մատակ առիւծի, որ օրհասական ահռելի մռըն-չիւնով դղրդացնում է խաղաղ անտառը, խռո-վում գիշերային խաղաղ-անդորրութիւնը։ Նա կատաղի մռնչիւնով սլանում էր այս ու այն կողմ՝ գտնելու, ծուիկ-ծուիկ անելու այն յան-դուգն արարածին, որ շանթահարած իրեն՝ սպառնում է յափշտակել իր թմփլիկ կո-րիւններին։ Դողդողում էր նա օրհասական

դառն կսկծից. կտրատւում էր մայրական սիր-տը ձագուկների վերահաս վտանգից. փրփրում, կատաղում էր գազանների թագուհին՝ տես-նելով յանդգնութիւն իր դէմ, վիրաւորուած իր արքայական արժանապատւութիւնը . . . Վիշտ, կսկիծ, ցաւ, երկիւղ, բոլորը միախառն-ուած էին։

Դողում էր մարտկոցը, դողում էր և կրակ ու ծուխ ժայթքում՝ ծաւալում իր շուրջը...

Բայց ո՞վ է սոսխը, որ խիզախել է մա-հասփիւռ տագնապի մէջ դնել դևին—մարտ-կոցին . . .

Բ.

Ոչ ոք չի երևում։

Բայց ահա՛, քարաժայռերի բեկորների միջանցքներից, նեղ-անանցանելի փապարնե-րով, փորի վերայ սողուկալով՝ յառաջ է շարժ-վում մի ուրուական։ Նա վայրենի կատուի նը-ման մերթ անյայտանում է ժայռերի բեկոր-ների մէջ, մերթ՝ գնտակների տարափի միջից ցատկում դէպի մի այլ ժայռի բեկոր։ Նա դանդաղ է գնում, սակայն յառաջ, մի՛շտ դէպի յառաջ։ Ահա՛ անցաւ նա փոքրիկ ձորակը և սլացաւ, պահւեց դէպի մարտկոցը տանող զառի-

վերի քարքարուտներում։ Կրկին մի ոտիւն դէպի վեր, բայց և աչա մարտկոցից գնտակների սոսկալի տարափ տեղաց դէպի այն քարքարուտները, ուր ապաստանել էր յանդուգն ուրուականը։

Մարտկոցից նկատել էին նրան։

Գնտակների տարափը անընդհատ շարունակւում էր. հեծում, շառաչում էին անլեզու քարերը և գետինը փոշի արձակում։ Անցան րոպէներ, իսկ ուրուականը չըկար։ Բայց և աչա նա յայտնւեց փայլակնային բոպէական մի երևոյթի պէս տարափւող վայրից շատ հեռու և կրկին աներևութացաւ քարաժայռերի բնական խոռոչներում։ Կրկին մի քանի ցատկումներ, մի քանի ճարպիկ ոստիւններ. և աչա ուրուականը գտնւում էր մարտկոցի ստորոտում գտնըւող բլրակի վերայ և կուչ էր եկել մի ծերպի ճեղքւածքում։ Հրեղէն շանթերն ուղղւեցին դէպի բլրակի քարաժայռը. իսկ ուրուականը անհոգ կերպով կծկւած խոռոչում, աներևոյթ իւր ոսոխների աչքից, ազատօրէն շնչում էր լեռնային կենսատու օդը և հանգիստ տալիս իւր վաստակած թոքերին։ Մարտկոցը մոլեգնել էր. նա աւելի կատաղի կերպով էր մռնչում և դափում բլրակի քարաժայռը։ Ուրուականի մարտկոցի ստորոտում յայտնւելը մի

ինչ-որ ներքին խռովութիւն ու սարսափ էր ազդում մարտկոցականներին, մի ինչ-որ անբացատրելի գաղտնիք խռովում էր նրանց։

Քարաժայռի գնտակնային դոփիւնը շարունակւում էր . . .

Գ.

Արշալոյսը բացւում էր։

Արիւնագոյն ամպիկները աւետում էին աշխարհին բնութեան թագաւորի մօտալուտ գալուստը։ Աղջամղջային թանձրութիւնը հետզհետէ փարատւում էր։ Մարտկոցը միայն պատած էր բաց-կապտագոյն ծխի շղարշով. բարձրը, հսկայական պարիսպների ականատներից թէև անդադար ժայթքում էին ծխի թանձր քուլաներ, բայց անմիջապէս կորցնելով իրենց թանձրութիւնը, տարածւում էին նրա շուրջը՝ բարձունքում։ Մռնչում էին թնդանօթները դէպի մօտակայ լեռները. ճայթում, ճարճատում էին անթիւ հրացաններ դէպի բլրակի քարաժայռը։

Իսկ ժայռն անսասան էր։

Կախարդական ուրուականն աներևոյթ էր և այդ աւելի սարսափեցնում էր մարտկոցին։ Բայց և աչա ժայռի խղակից յայտնւեց մի

ձողի ծայր, որը քսնի գետնից վեր էր բարձրանում՝ այնքան աւելի կարմրում և արեան գոյն էր ստանում։ Կարծես նա գետնից էր բռնում և անդադար պտտւում էր։ Առաւօտեան մեղմ զեփիւռը դիպչելով ձողին, նրա վերայ փաթաթւած լաթը բացւեցաւ և արեանգոյն դրօշակն սկսեց փողփողալ ժայռի կատարին։ Մռնչաց արբշիռ կատաղութեամբ մարտկոցը, հաղարաւոր գնտակներ ծակծկեցին անմեղ պաստառը. մարտկոցը իւր ամբողջ ոյժը ուղղեց դէպի նա, կարծես այդ մի պատառ լաթը լինէր նրա ոսոխը, որի դէմ մոլեգնաբար մաքառում էր։ Թափւում էին գնտակները, մռնչում էր վիշապը, իսկ նրա զօրութիւնը խորտակող յաղթական դրօշակը փողփողում էր անսասան։ Ծածանւում էր կարմիր լաթը, ծածանելով իւր հետ «Հ. Կ.» սպիտականիշը...

Դ.

Յաղթական դրօշը հոգի ներշնչեց դէպի ամէն կողմ։ Լեռներ—քարեր հոգի առան, դըղրդացին. նախկին համատարած մեռելութիւնը չքացաւ և ամրոցի դղրդիւնը խլացաւ շրջակայ լեռներից լսւող ճարճատիւնից ու դղրդիւնից։ Ամէն մի քարից, ամէն մի ժայռից ծուխ էր

բարձրանում. շրջակայքը, կարծես, դրօշակը երեւալուն պէս, անակնկալ կերպով բռնկւեց մի ընդհանուր հրդեհով, որը սպառնում էր լափել, ոչնչացնել ամեհի վիշապին—մարտկոցին։ Հրեղէն շանթերն ուղղւել էին դէպի մարտկոցը և ծխի քուլաները իրենց ընթացքը ուղղելով դէպի նա, հաւաքւել էին նրա գլխին, կարծես կամենալով իրենց ծանրութեան ներքոյ ճնշել, ոչնչացնել նրան։ Իսկ դրօշա՞կը։— Նա միշտ փողփողում էր իւր անհամար ծակոտիներով։ Բայց և ահա գնտակների մի խիստ տարափ ևս, և, քարաժայռի խոռոչից ուրուականը թաւալագլոր ցած ընկաւ քարքարուտների մէջ և միայն ոտքերը մի փոքր կուչ ու ձիգ անելով՝ մնաց տեղն ու տեղ անշարժ։ Ուրախական մի վայրենի աղմուկ լսւեց մարտկոցից, իսկ շրջակայ լեռնային քարաժայռերից դադարեց մի բոպէ յարձակողական բնաւորութիւն ունեցող հրացանների ահեղադղրդ որոտմունքը։ Կարծես ամենքն էլ հետաքրքրւում էին ուրուականի դրութիւնով։ Այդ անակնկալ բոպէին, ամրոցի պարսպի գլխից՝ պարանի օգնութեամբ ցած սողաց մէկը և, կարծես օգտւելով ուրուականի օրինակից, սկսեց սողսողալով քարերի արանքից յառաջանալ դէպի բլրակի քարաժայռը, որի գլխին փողփողում էր կարմիր դրօ-

շակը . . . Մօտակայ լեռների քարաժայռերից թէև բազմաթիւ հրացաններ ուղղեցին դէպի նա, բայց նա ուրականի զգուշութեամբ, քարքարուտներում տափելով, սողալով, ցատկելով՝ անդադար յառաջէր գնում։ Ո՞րպիսի ոգևորութեամբ և յանդուգն անվեհերութեամբ ուրականը գնում էր դրօշակը բարձրացնելու, նո՛յնպիսի ոգևորութեամբ և յանդուգն անվեհերութեամբ վերջինը գնում էր՝ խորտակելու, վերառնելու այդ դրօշակը . . .

Ե.

Ընկած էր ուրականը իւր բարձրացրած յաղթական դրօշից մի քանի քայլ միայն հեռու, որ մեղմ զեփիւռային ներդաշնակ փողփողումը, կարծես, վերջին դիւցազներգական մեղեդին էր նագում նրա գլխի բարձունքում։ Այդ դիւցազներգական քաղցր մեղեդուն արձագանք էին տալիս լեռներ ու ձորեր, քարեր ու ծերպեր՝ հրացանների աչեղաղղորդ ճարճատիւնով —

Որոնք, կարծես թէ՝ սուրբ քշոցներ են
Եւ ծնծղկաներ
Հանգստեան կարգի՝ սուրբ թափոր մտած.
Մարտական գոռը, յաղթական գոչը՝

Կարծես քաղցրախօս սարկաւագների
Եւ հրեշտականաց դպրաց խմբերի՝
Դիւցազնի թաղման կատարում են կարգ...
Եւ վառօդի ծուխն համասփիւռ հոտով՝
Կարծես բուրմունքն է խնկի, կընդբրկի,
Մաւալում շուրջը՝ վեհ ուրականի...
Ընկած է նա։ Իսկ ոսո՞խը։
— Նա մօտենում է սրբազան դրօշին։
Դերերն են փոխուած.—
Մինչ մօտենում էր ուրականը ժայռին,
Մարտկոցն մոլեգին գնտակի տարափ
Թափում էր գլխին,
Իսկ լեռները լո՞ւռ, անխօս, անմռունչ,
Լոկ դիտում էին այդ անհաւասար
Մրցող ուժերին,
Եւ տագնապալից սպասում էին
Մրցման վախճանին.
Բայց ուրականը՝ լի՛ բուռն եռանդով,
Լի՛ նուիրական սուրբ տենչանքներով,
Յաղթանակեց նա. և ժայռի գլխին
Տնկեց կարմրագոյն փառքի կոթողը.
Եւ ժողովրդի (որի հարազատ
Զաւակն էր նա) խլած իրաւանց
Կանգնեց յաղթ սիւնը բռնութեան դիմաց.
Եւ ընկաւ ազատ... Նման դիւցազնի
Յաղթական փառքի ծաղկեայ դափնազարդ

Կամարների տակ . . .
Մօտ էր ոսոխը։ Մի քանի քայլ ևս
Եւ ահա յաղթական դրօշը պիտ տապալէր,
Պիտի խորտակէր . . .
Մէկը նշանակ՝ ժողովրդի իրաւանց,
Սուրբ ազատութեան— կանգնել էր նրան՝
Իւր արեան գնով,
Միւսը նշանակ՝ տիրանի բռնութեան
Իւր արեան գնով՝ կուզէր խորտակել . . .
Լուռ էր մարակոցը։ Նա լուռ դիտում էր
Իւր քաջ—անվեհեր զաւակի երթը,
Որ պիտ խորտակէր տիրանենդների
Դաւաճանութեան այդ բիրտ նշանը։
Թնդում էին լեռներն, ահեղ դղրդում,
Ամեն մի քարից, ամեն նի քօլից՝
Գնտակի տարափ ուղղում՝ ոսոխին,
Որ յանդգնում էր մօտենալ դրօշին։
Բայց նա շարժւում էր անդադար յառաջ։
Յուսահատական վերջին մռնչիւն
Լսեց լեռներից . . .
Մի քանի քայլ ևս՝ և ահա՛, ահա՛
Մեկնեց նա ձեռքը սրբազան դրօշին . . .
— Դը՜ռռ . . .
Որոտաց յանկարծ այն ժայռի տակից,
Գնտակը սուլեց,
Դեռ չըշոշափած ոսոխը դրօշին

Թաւալգլոր գահավէժ եղաւ
Ժայռի կատարից։
Թնդացին նորից լեռները թօշնած,
Յաղթական երգը, յաղթական գոչը
Ոգևորութեան՝
Լսեցաւ կրկին ամեն կողմերից։
Իսկ ուրուակա՞նը։
— Այլ ևս չկա՜ր . . .

Ջ.

Փառքից ուռճացած գոռոզ տիրանի
Սիրտը թալկացաւ.
Յուսահատութեան մահու տագնապը
Պատել էր նրան,
Ճակատագրական վճիռը դաժան
Հարուածեց նրան։
Եւ լո՜ւռ, մտախո՜հ, ներքին յուզման մէջ,
Մտքի փոթորկում՝ նա տատանւում էր —
Խոնարհւե՞լ արդեօք.
Բայց ո՞ւմ, ո՞ւմ առաջ . . . ստրուկ գեա-
ւուրի՞ . . .
Այն որ գրաստի պիտ՝ անէ պաշտօն։
Խոնարհւե՞լ . . . Ստրո՞ւկ ստրկին։
Ո՜հ, այդ կարող չէ՛ անել բնաւին՝
Յաղթական փառքին, վեհ—ազատ կեանքին

Դարերից վարժված խալամի որդին . . .
Լուռ էր մարտկոցը։
Որպէս սպասող կարծես հեկեկում,
Շանթերի փոխան արցունք էր թափում,
Բախտի անիւը թարս էր պտտում։
Մահու ցասումը կաշկանդել էր նրան,
Դաժան դահիճը կանգնած էր դրան։
Ո՞րն ընտրել, արդե՞օք, ալատ մա՞հ, թէ՝
կեանք.
Երկուսն էլ քաղցր են, մէկը քան զմիւսը
Թովիչ, կախարդիչ. . .
Լեռներ ու ձորեր բռնկուան նորից,
Ահեղ դղրդիւն, շանթ, որոտ, կայծակ՝
Լսւում են մօտից։
Քարեր ու քոլեր, ժայռեր, բեկորներ,
Շունչ-հոգի առած՝ շարժւում են յառաջ։
Մռայլ ամպի պէս՝ սար ու ձոր ծածկած
Կարիճ զէյթունցիք մղւում են յառաջ.
Գալիս են, կարծես, լափել կործանել,
Զարութեան բունը,
Բռնութեան տունը։
Որպէս մի ահեղ հզօր փոթորիկ,
Կատաղի յորձանք, կոհակներ ալիք,
Ծփում է յառաջ, փշրել, խորտակել
Այդ արհաւրալից դիւական օրջը,
Ուր դառն արցունքով հեծել են թշւառ

Անմեղ շա՞տ ղոհեր. . .
Ահա որոտմունք, կրկին դղրդիւն, —
Սարսում է ամրոցն, կարծես դողդողում,
Պաշարուածներին փլատակներում
Թաղել սպառնում։
Բայց. . . ահա՛, ահա՛, ամրոցի գլխին՝
Ծածանւում է նա—սպիտակ պաստառը. . .
Օ՜հ, նա խոնարհւե՞ց, տիրանն անձնատո՞ւր,
Տիրանն ահաբե՞կ,
Կեցցէ՞ յաղթանակ. . .

* * *

Դառ բռնութիւնը երկար դարերով,
Իւր ահեղ ոյժով,
Սուրբ իրաւունքի հեսը մարտնչեց,
Սարուկ ու տիրան իրար բաղխեցին,
Արեան գետակներ անվերջ հոսեցին . . .
Տիրանը կը ջանար տիրել յաւիտեան,
Սարուկը կըճգնէր փշրել իւր շղթան. . .
Անցնում են դարեր, անվե՞րջ, անսասա՞ն,
Կռւում են կռւում՝ սարուկն ու տիրան. . .
Եւ արդարութեան ոյժը աշարկու,
Եւ ազատութեան հուրը կենսատու,
Բռնութեանն այրող, քաջին շունչ տուող
Նորից բռնկւեց . . .

Գոռ բռնութիւնը ծիւրած, ուժասպառ,
Այլ եւ անզօր—իսպառ խորտակւեց,
Մարդկային խղճի ու արդարութեան
Սուրբ իրաւունքը փառքով պսակւեց...

* * *

Փչում էր մեղմիկ՝ զեփիւռ անուշիկ,
Հազար ծակոտկէն դրօշը փողփողում,
Եւ նւիրական այդ դրօշի առաջ
Մի սէգ պատանի հրացանն ուսին՝
Կանգնած է որպէս „անդրանիկ պահակ"...
Թնդաց ամբոխը, որոտաց ուժգին.
„Կեցցէ՛ Հերոսը, կեցցէ՛ պատանին"...

ՀՈՎՀԱՑԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԻԱՍՆԻԿԵԱՆԻ
Անվան
Публичная Библиотека

10352